Ինչպես կատարել վճարումները

Տեղեկությունը վճարման տարբերակների մասին և այն մասին, թե ինչպես կատարեք վճարումները Դուք կարող եք ստանալ երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությունում: Բացի այդ, Դուք նամակով կստանաք վճարման վերաբերյալ ցուցումները: Երեխաների ապրուստադրամը կպահվի Ձեր աշխատավարձից:

Հիշեք՝ երեխայի ապրուստադրամի վճարումները պետք է կատարվեն ամբողջապես և ժամանակին:

Ի՞նչ տեղի կունենա, եթե ես բոլոր վճարումները ժամանակին չկատարեմ:

Եթե Դուք չվճարեք դատարանի որոշմամբ սահմանված երեխայի ապրուստադրամը, կարող են ձեռք առնվել հետևյալ միջոցները.

- Գումարի չվճարված մասի վրա տարեկան 10 տոկոս տույժ կավելանա:
- Գումարը կառգրավվի Ձեր այլ եկամուտներից, այդ թվում՝
  - նահանգային կամ դաշնային եկամտահարկից.
  - գործազրկության նպաստից.
  - աշխատողների փոխհատուցման նպաստից.
  - անաշխատունակության նահանգային նպաստից.
  - վիճակախաղի շահումներից:
- Ձեր վարորդական իրավունքը և աշխատանքային արտոնագիրը կարող են չեղարկվել:
- Կարող է կալանք դրվել Ձեր գույքի և բանկի հաշվի վրա:
- Կարող են մերժել Ձեզ անձնագիր տալ:
- Երեխայի չվճարված ապրուստադրամի մասին կզեկուցվի վարկային գրասենյակ:
- Կարող են ձեռնարկվել օրենքի կիրարկման այլ լրացուցիչ միջոցառումներ:

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:

Առնոլդ Շվարցենեգեր, Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

Քիմբըրլի Բելշե, Կալիֆոռնիայի առողջապահության և սոցիալական ծառայությունների գործակալության քարտուղար

Գրետա Ուալաս, Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 247 (1/06)
ARMENIAN

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

Տեղեկություններ չխնամող ծնողի համար

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

Ո՞վ ենք մենք

Երեխաների օգնության տեղական գործակալությունների միջոցով՝ Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտն (DCSS) անվճար ծառայություններ է տրամադրում անչափահաս երեխաների ծնողներին, խնամակալներին և խնամողներին՝ անկախ նրանց ամուսնական դրությունից, եկամուտից և այն բանից, թե արդյո՞ք ծնողները ստանում են պետական օգնություն:

Ինքըծ ենմ մենմ զ□աղծըղմ՝

- գտնում ենք երեխայի ծնողին.
- հաստատում ենք հայրությունը.
- հաստատում, վերանայում կամ կիրարկում ենք երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումը.
- հաստատում, վերանայում կամ կիրարկում ենք առողջության ապահովագրություն տրամադրելու վերաբերյալ դատարանի որոշումը.
- գանձում և ուղարկում ենք երեխաների և ամուսնական ապրուստադրամը:

Երեխային տրամադրվող նյութական օգնությունից և ծնողի խնամքից է կախված, թե երեխան ինչ ունի կյանքում, ինչ կարող է անել և ինչ կդառնա:

Ո՞վ է չխնամող ծնողը

Չխնամող ծնողն այն ծնողն է, որի խնամքի տակ երեխան ֆիզիկապես չի գտնվում: Այս եզրն օգտագործվում է երեխայի ապրուստադրամ վճարող ծնողին՝ այն ստացող ծնողից տարբերելու համար, չնայած եզրը կարող է վիճաբանության տեղիք տալ այն դեպքում, երբ չխնամող ծնողն իրականում և՛ անձամբ, և՛ ֆինանսապես գործուն մասնակցություն է ցույց տալիս երեխայի կյանքին:

Ինչու՞ է իմ վերաբերյալ գործ բացվել

Գործ է բացվում յուրաքանչյուր ծնողի, խնամակալի կամ խնամողի վերաբերյալ, որը դիմում է մեր ծառայությունները ստանալու համար: Ըստ օրենքի, եթե երեխան պետական օգնություն է ստանում, գործը բացվում է ինքնաբերաբար:

Ես պե՞տք է դատարան գնամ

Դուք իրավունք ունեք, որ Ձեր գործը լսվի դատարանում, սակայն հնարավոր է, որ Դուք կարողանաք հարցը կարգավորել առանց դատարանի՝ հանդիպելով երեխաների օգնության տեղական գործակալության որևէ աշխատակցի հետ:

Ի՞նչ կարող եմ ես սպասել

Ձեզ փաստաթղթեր կտրվեն Ձեր գործի վերաբերյալ: Դատարանի ընտանեկան օրենքի խորհրդատուն (նա չի հանդիսանում երեխաների օգնության գործակալության աշխատակիցը) Ձեզ անվճար իրավաբանական օգնություն ցույց կտա և կարող է օգնել Ձեզ, եթե Դուք հարցեր ունենաք փաստաթղթերի վերաբերյալ:

Եթե Դուք համարում եք, որ Դուք չեք երեխայի հայրը, երեխաների օգնության տեղական գործակալությունը կարող է ընդհանուր բնույթի ստուգում պատվիրել՝ պարզելու համար, թե արդյո՞ք դա իսկապես այդպես է: Այն բանից հետո, երբ հաստատվի հայրությունը, ձեռք կբերվի դատարանի որոշում երեխայի ապրուստադրամի վերաբերյալ: Երեխայի ապրուստադրամի չափը սահմանվում է նահանգում գործող չափանիշների համաձայն, որոնք հաշվի են առնում յուրաքանչյուր ծնողի եկամուտը և այլ կարգի տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ ժամանակը, որ ծնողներից յուրաքանչյուրն անց է կացնում երեխայի հետ: Հաշվի են առնվում նաև երեխայի հատուկ պահանջները:

Ձեզանից կարող է պահանջվել երեխայի ապրուստադրամը վճարել երեխաների օգնության տեղական գործակալության միջոցով, որը կզբաղվի Ձեր գործով այնքան ժամանակ, քանի դեռ այն բաց է: Ձեր գործատիրոջը կիրահանգվի երեխայի ապրուստադրամը պահել Ձեր աշխատավարձից:

Ի՞նչ անել, եթե ես չեմ համարում, որ ես եմ երեխայի հայրը

Ստանալուն պես այն փաստաթղթերը, ըստ որոնց Դուք եք երեխայի հայրը, զանգահարեք երեխաների օգնության տեղական գործակալություն, որը քննում է Ձեր գործը: Երեխաների օգնության տեղական գործակալությունը հավանաբար կկարողանա օգնել Ձեզ ստուգում անցկացնելու հարցում: **Անուշադրության մի մատնեք անդ փաստաթուղթը:** Եթե Դուք 30օրից ավել սպասեք, դատարանն ինքնաբերաբար կհաստատի Ձեր հայրությունը: Ձեզանից կպահանջվի երեխային ապահովել բժշկական ապահովագրությամբ և ապրուստադրամ վճարել դատարանի սահմանած չափով:

Ի՞նչ անել, եթե ես համաձայն չեմ երեխայի ապրուստադրամի չափի հետ

Յնարավոր է, որ Դուք կարողանաք համոզել դատարանին փոխել երեխայի ապրուստադրամի չափը, եթե երեխաների օգնության տեղական գործակալությանը նոր տեղեկություններ տրամադրեք Ձեր կյանքի պայմաններում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ (տես ստորև նշվածը): Դուք կարող եք նաև դատարան գնալ և բողոքարկել որոշումը:

Ի՞նչ պետք է ես անեմ

- Ծանոթացեք Ձեզ ուղարկված փաստաթղթերին և պատասխանեք դրանց:
- Եթե Դուք հարցեր կամ անհանգստություններ ունեք, զանգահարեք երեխաների օգնության տեղական գործակալություն:
- Ամբողջությամբ և ժամանակին վճարեք ապրուստադրամը:
- Ցանկության դեպքում՝ մասնավոր իրավաբանական խորհրդատվություն ստացեք:
- Պահեք Ձեր կատարած վճարումների ճշգրիտ հաշիվը. դա կօգնի, եթե Դուք հարցեր ունենաք Ձեր գործի վերաբերյալ:
- Երեխաների օգնության տեղական գործակալությանը տեղյակ պահեք Ձեր կյանքի պայմաններում տեղի ունեցած այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել Ձեր գործի վրա, այդ թվում՝
  - խնամակալության և այցելությունների.
  - եկամուտի.
  - աշխատանքի.
  - աշխատողների փոխհատուցման.
  - անաշխատունակության կարգավիճակի.
  - հասցեի.
  - ամուսնական դրության.
  - ընտանիքի անդամների թվի մեջ տեղի ունեցած փոփոխությունների.
  - բանտարկության կամ ձերբակալման.
  - երեխայի խնամքի.
  - առողջության ապահովագրության:

Այս տեղեկությունները տրամադրելը կարող է օգտակար լինել Ձեզ համար և ազդել այն գումարի վրա, որը Դուք պետք է վճարեք: